Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N13 -ՀԽ

ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի նիստի

Քաղաք Երևան 21.02.2018թ
Ժամը 16:30

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Ա.Մինասյան ՀՀ բնապահպանության նախարար-խորհրդի նախագահ

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Խ.Հակոբյան ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
Կ.Դանիելյան «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ
Վ.Հակոբյան «Դեմետրա-էկո» բնապահպանական-գյուղատնտեսական ՀԿ նախագահ
Ա. Իսկոյան «Շրջակա միջավայրի պահպանության իրավական կենտրոն» ՀԿ
Ա. Միրզոյան «Սպառողների աջակցման կենտրոն» ՀԿ
Ա. Համբարձումյան «Խազեր» էկոլոգոմշակութային ՀԿ նախագահ
Ս. Այվազյան Երևանի Օրհուս կենտրոնի համակարգող
Գ.Օգանեզովա ‹‹Հայկական բուսաբանական ընկերություն›› ՀԿ
Մ.Չաքրյան «Հանրային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ
Մ. Տաշչյան «Էկոնյուզ» բնապահպանական տեղեկատվական կայք
Լ. Թասալյան «Գիտակցիր իրավունքդ» ՀԿ
Հ. Սանասարյան «Հայաստանի կանաչների միություն» ՀԿ
Կ. Աղաբաբյան «ԹՍԵ - դեպի կայուն էկոհամակարգեր» ՀԿ
Լ. Մուրադյան ՀԱՀ «Հակոբեան» բնապահպանական» կենտրոն
Ա.Վարդանյան ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ:

Հրավիրված էին՝

Սիմոն Պապյան ‹‹Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն›› ՊՈԱԿ-ի տնօրեն
Անդրանիկ Ռաշիդյան ՀՀ արդարադատության նախարարություն
Արամ Ասատրյան «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» հիմնադրամ
Լուսինե Վահրամյան Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Հարց 1. «էկոլոգիական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի քննարկում

Զեկուցող՝ ‹‹Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն›› ՊՈԱԿ-ի տնօրենի խորհրդական Ջուլիետա Ղլիչյան

Ելույթով հանդես եկավ Ա. Մինասյանը- Հաստատման դրեց նիստի օրակարգը:

Ելույթով հանդես եկավ Հ. Սանասարյանը- Առաջարկեց Հասարակական խորհրդի առաջիկա նիստի օրակարգում ընդգրկել Ամուլսարի հանքավայրի շահագործման և արտադրական թափոնների կառավարման հարցերը:

Պարզաբանմամբ հանդես եկավ Ա. Մինասյանը- Հայտնեց, որ խորհրդի նախկին նիստերում հարցը քննարկվել է և ՀՀ բնապահպանության նախարարությունը մշտապես պատրաստակամ է եղել քննարկել ոլորտի վերաբերյալ հասարակությանը հուզող ցանկացած հարց: Ըստ նախարարի՝ գերատեսչությունը հարթակ էր տրամադրել Հարութ Բրոնոզյանի գլխավորած միջազգային փորձագետների և «Լիդիան Արմենիա» ընկերության ներկայացուցիչների հանդիպման համար, որին հրավիրվելու էին նաև շահագրգիռ բոլոր հասարակական կազմակերպությունները և Հայաստանի փորձագետները, բայց միջազգային փորձագետները հրաժարվել էին մասնակցությունից: Խորհրդի նախագահը ներկաներին տեղեկացրեց, որ նախարարի գլխավորությամբ բնապահպանական գերատեսչության պատասխանատու ստորաբաժանումների ղեկավարները հանդիպել են «Լիդիան Արմենիա» ընկերության փորձագետների հետ և բարձրացրել հասարակությանը մտահոգող բոլոր հարցերը, որոնց ի պատասխան փորձագետները ներկայացրել են հիմնավորումներ: Ներկայացնելով բարձրացված հարցերի կարգավորման ուղղությամբ նախարարության կողմից կատարվող միջոցառումները՝ Ա. Մինասյանը տեղեկացրեց, որ ՀՀ կառավարությունը փետրվարի 22-ին քննարկելու է ընդերքօգտագործողների ինքնամոնիթորինգի համակարգի ներդրման որոշման նախագիծը, որով սահմանվում է, որ ընկերությունները կենսաբազմազանության առանձին տարրերի վերաբերյալ սեփական միջոցներով պարբերաբար մոնիթորինգ /այդ թվում նաև լաբորատոր միջոցներով/ անելու պարտավորություն են ստանձնում և դրանց արդյունքները եռամսյակային, տարեկան պարբերականությամբ պարտադիր հրապարակվելու են: Դրան զուգահեռ պետական միասնական մոնիթորինգով նույնպես կիրականացվեն ծրագրեր՝ սահմանված նորմերից հնարավոր շեղումներն արձանագրելու և նախնական փուլում օպերատիվ լուծումներ տալու համար:
Ա.Մինասյանը խորհրդի անդամներին նաև տեղեկացրեց, որ մշակվել է «ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով սահմանվելու է «Հողագրունտ» հասկացությունը, ինչպես նաև իրավական կարգավորում կտրվի հողի բերրի շերտի հանելու, օգտագործելու և ռեկուլտիվացման հարցերին, մասնավորապես՝ ճանապարհաշինության ոլորտում: Օրենսդրական փոփոխությամբ նախատեսվում է նաև ընդունել ՀՀ կառավարության որոշում, որով կսահմանվի հողագրունտի հանույթի կարգը:

Ելույթով հանդես եկավ Ա. Մինասյանը- Նշեց, որ «Էկոլոգիական քաղաքականության մասին» օրենքի նախագիծը բնապահպանական հիմնարար սկզբունքներ ամրագրող այնպիսի մի նորմատիվ ակտ է, որը կդառնա նաև ոլորտի ողջ օրենսդրության վերանայման

հիմք: Ակնկալել, որ մեկ օրենքով հնարավոր է ողջ օրենսդրությունը համառոտ դնել սեղանին՝ իրատեսական չէր, բայց որ սկզբունքները, մոտեցումները պետք է ամրագրեինք և օրենսդրական վերանայումների քաղաքականությունը պետք է հիմնվի դրանց և հասարակության առաջարկների վրա՝ կարևոր է:

Ելույթով հանդես եկավ Ջ. Ղլիչյանը-Ներկայացնելով օրենքի նախագիծը՝ բանախոսը նշեց, որ խնդիր էր դրված բնապահպանության ոլորտում օրենսդրական կարգավորումները համահունչ դարձնել արդի պահանջներին, այդ թվում նաև Հայաստան-ԵՄ շրջանակային համաձայնագրի պահանջներին: Օրենքի նախագիծը կառուցվել է արդեն գործող օրենսդրության օգտագործման և ժամանակի նոր պահանջների համադրմամբ: Բնապահպանության ոլորտը կարգավորող գործող օրենքները ճյուղային՝ ուղղահայաց բնույթ ունեն և առաջարկվող օրենքի նախագիծը կարգավորում է հորիզոնական հարաբերությունները, այդ թվում նաև՝ էկոհամակարգային մոտեցումների: Էկոլոգիական քաղաքականության մասին օրենքի ընդունումից հետո իրականացվելու են համալիր փոփոխություններ բոլոր օրենքներում, ինչպես նաև մշակվելու են նոր օրենքներ: Օրենքի նախագծով կարգավորվում են էկոհամակարգային ծառայությունների մատուցման, շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման և հսկման համակարգի ներդրման, բնապահպանական թույլտվությունների տարբերակման, էկոմակնշման, էկոաուդիտի և այլ հիմնարար խնդիրներ: Տեղեկցվեց, որ օրենքի նախագծի ընդունումից հետո 8 ենթաօրենսդրական ակտի ընդունման անհրաժեշտություն կլինի:

Հարցով հանդես եկավ Կ. Դանիելյանը-Մտահոգություն հայտնեց,որ օրենքի նախագծով արտանետումների խնդրի կարգավորման համար 13 տարի ժամանակահատված է սահմանված:

Պատասխանով հանդես եկավ Ջ. Ղլիչյանը-Նշեց, որ արտանետումների սահմանափակումը կրելու է փուլային բնույթ և վերջնական արդյունքը նախատեսվում է հասնել 13 տարի հետո: Ընկերությունները պետք է գնան արտանետումների կրճատման տարեկան սահամանափակումներն ապահովող ուղեցույցներով:

Հարցով հանդես եկավ Գ. Օգանեզովան-Հետաքրքրվեց, թե օրենքի նախագիծը ներկայում ո՞ր փուլում է գտնվում և հանրային քննարկման դրվել է, թե ոչ:

Պարզաբանմամբ հանդես եկավ Ջ. Ղլիչյանը- Նշեց, որ կազմակերպվել է հանրային քննարկում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում «Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» ՀԿ-ի աջակցությամբ: Նախագիծը հրապարակված է եղել e-draft.am կայում, և քննարկումների ժամանակ շատ քիչ առաջարկներ են եղել:

Հարցով հանդես եկավ Հ. Սանասարյանը-Հարց բարձրացրեց, թե արդյոք կարգավորվելու են արտանետումների թույլտվությունների տրամադրման գործող նորմերը, որոնք հնարավորություն են տալիս ընկերություններին ստանալ մեծ ծավալի արտանետումների ժամանակավոր թույլտվություն և վճարել դրանց դիմաց:

Պատասխանով հանդես եկավ Ջ. Ղլիչյանը- Նշեց, որ օրենքի նախագծի ընդունմանը հաջորդելու է «Աղտոտման համալիր կանխարգելման մասին» օրենքի ընդունումը, որտեղ ժամանակավոր թույլտվություն չի լինելու, այլ կլինի անժամկետ, և փոփոխության է ենթարկվելու միայն ընկերության կողմից շահագործման տեխնոլոգիայի փոփոխության ժամանակ: Այդ փոփոխությունները կլինեն հավելվածների տեսքով: Այդ օրենքով պարտադրվելու է, որ ընկերություններն անցնեն մաքուր տեխնոլոգիաների:

Պարզաբանմամբ հանդես եկավ Ա. Մինասյանը-Տեղեկացրեց, որ 2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած հարկային օրենսգրքի 167-րդ հոդվածով սահմանված է այն խիստ միջոցները, որոնք կիրառվելու են այն տնտեսվարողների նկատմամբ, որոնք չեն կատարել բնապահպանական նորմերի պահպանման ուղղությամբ ստանձնած պարտավորությունները: Այդ դեպքերի համար մեծ տույժեր են սահմանվել: Բայց և շեշտեց, որ օրենսդրական փոփոխություններով պետք է հասնել նրան, որ կանխարգելվի աղտոտումը, այլ ոչ թե տնտեսվարողն աղտոտի և վճարի:

Հարցով հանդես եկավ Լ.Վահրամյանը-Հետաքրքրվեց, թե ո՞ր ձեռնարկողներին է վերաբերում օրենքի նախագծում ամրագրված բնապահպանական միասնական թույլտվության գաղափարը և այն գործարար միջավայրի համար լրացուցիչ ծանրաբեռնվածություն առաջացնելու է, թե ոչ:

Պարզաբանմամբ հանդես եկավ Ջ. Ղլիչյանը-Նշեց, որ դրույթը բոլոր տեսակի տնտեսական գործունեություն իրականացնողներին է վերաբերում:

Պարզաբանմամբ հանդես եկավ Ա. Մինասյանը- Շեշտեց, որ առաջարկվող լուծումներով էականորեն դյուրինացվելու է գործարարությամբ զբաղվել ցանկացողների թույլտվության ներկայիս գործող մեխանիզմը, տարբեր գերատեսչություններին դիմելու փոխարեն՝ առաջարկվող օրենքով նրանք կարող են մեկ դիմումով ստանալ գործունեություն ծավալելու թույլտվություն:

Ելույթով հանդես եկավ Ս. Պապյանը-Ներկայացրեց օրանքի նախագծի միջոցով կարգավորվող հիմնարար բնապահպանական սկզբունքները, որոնցով ամրագրվում է էկոհամակարգային, բիզնես թույլտվության համալիր մոտեցումները, բնապահպանական մոնիթորինգի և կանաչ տնտեսության գաղափարը:

Հարցով հանդես եկավ Ա.Իսկոյանը- Հարցրեց, թե օրենքի նախագծում արդյոք սահմանված է «Բնապահպանական վնաս» հասկացությունը՝ շեշտելով, որ վնասը քաղաքացիական իրավունքի ինստիտուտ է: Կարևորեց նաև էկոլոգիական ռիսկի և ապահովագրության ինստիտուտների ամրագրումը:

Պատասխանով հանդես եկավ Ջ.Ղլիչյանը-Հայտնեց, որ բնապահպանական ապահովագրությունը ներառված չէ օրենքի նախագծով և այն կարգավորվելու է առանձին օրենքով:

Առաջարկով հանդես եկավ Ա. Մինասյանը-Առաջարկեց օրենքի նախագծում բնապահպանական ապահովագրության համակարգի դրույթի ներառումը մեկ անգամ ևս քննարկել շահագրգիռ գերատեսչությունների հետ:

Որոշվեց

Հասարակական խորհրդի հաջորդ նիստը հրավիրել մինչև սույն թվականի մարտի վերջ և օրակարգում ներառել Հ. Սանասարյանի առաջարկած՝ Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման խնդիրներին առնչվող հարցը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՄԻՆԱՍՅԱՆ**

Արձանագրեց
Ա.Վարդանյանը